

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԳ) Քաղաքացիական հասարակության ֆորումը (այսուհետ՝ ԱԳ ՔՀՖ կամ ՔՀՖ) շահույթ չհետապնդող, կուսակցական և կրոնական ազդեցություններից զերծ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց է, որը գործում է Եվրոպական միությունում եւ Արևելյան գործընկերության պետություններում, որպիսիք են Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Մոլդովան եւ Բելառուսը:

1.2 ԱԳ ՔՀՖ-ի առաքելությունն է ապահովել Արևելյան գործընկերության և Եվրոպական միության անդամ պետությունների քաղաքացիական հասարակության կառույցների արդյունավետ քաղաքականության մասնակցությունը պլանավորման, Արևելյան մշտադիտարկման եւ գործընկերության իրականացման գործընթացին, Եվրոպական միության եւ Արևելյան գործընկերության պետությունների որոշում կայացնողների հետ կառուցողական երկխոսության միջոցով Արևելյան գործընկերության պետությունների ժողովրդավարական զարգացման և եվրոպական ինտեգրման ոլորտում: **ՔՀՖ-ի նպատակն** է Արևելյան գործընկերության պետություններում ապահովել բազմազանություն ու բազմակարծություն հանրային խոսույթում և հանրային քաղաքականության մշակման ասպարեզում՝ կառավարությունների հաշվետվողականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնակցային ժողովրդավարության ջատագովման միջոցով:

1.3 ՔՀՖ-ի Հայաստանի ազգային պլատֆորմը (այսուհետ՝ ՀԱՊ) ՔՀՖ-ի առաքելության, արժեքների և սկզբունքների համաձայն հիմնադրված և դրանք ընդունող հայաստանյան քաղաքացիական հասարակության կառույցների (այսուհետ՝ ՔՀԿ) կամավոր միավորում է, որի անդամներն իրենց լավագույն ջանքերն են ներդնում՝ կյանքի կոչելու ՔՀՖ-ի առաքելությունը, արժեքները եւ նպատակները Հայաստանում, ինչպես նաև ԱԳ ամբողջ տարածաշրջանում: ՀԱՊ-ը հետամուտ է ԱԳ ծրագրերի իրականացմանը, երկրի ներքին խնդիրների լուծումները ԵՄ չափորոշիչներին համապատասխանեցնելուն, հասարակության բոլոր շերտերի մասնակցայնության եւ տեղեկացվածության ապահովմանը, ժողովրդավարական բարեփոխումների հետևողական իրականացմանը: ՀԱՊ-ի կարելուր պարտականություններից է նաև ՀՀ իշխանության կողմից ԵՄ-ի առջև ստանձնած հանձնառությունների մշտադիտարկումը և այդ հանձնառությունների կատարման վերաբերյալ արդյունավետ խորհրդատվության տրամադրումը:

1.4 ՀԱՊ-ի անդամները և որոշում կայացնող մարմիններն առաջնորդվում են ՔՀՖ 2018թ. տարեկան համաժողովի ընդունած ՔՀՖ-ի էթիկայի կանոններով և ՀԱՊ-ի էթիկայի կանոններով սահմանված արժեքներով և սկզբունքներով:

1.5 Ձևավորման պահին ՀԱՊ-ը չի ունեցել իրավաբանական անձի կարգավիճակ և դրա կազմակերպատիրավական ձևը կոդիտարկվի ՀԱՊ հետագա հանրակարգային զարգացմանը համապատասխան:

1.6 ՀԱՊ-ի կազմավորման նախաձեռնող անդամներն են ԱլԳ ՔՀՖ առաջին՝ 2009թ. համաժողովի մասնակցության հրավեր ստացած հայաստանյան կազմակերպությունները:

1.7 Իր առաքելության շրջանակներում ՀԱՊ-ի գործունեության ուղղություններն են՝

ա) ԱլԳ գործընթացներում քաղաքացիական հասարակության կառույցների ակտիվ ներգրավումը և շարունակական մասնակցության ապահովումը,

բ) ԱլԳ շրջանակներում ԵՄ-ի կառույցների եւ ՀՀ իշխանության մարմինների հետ կառուցողական երկխոսության միջոցով ՀՀ ազգային օրակարգի ձևավորմանը եւ ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը մասնակցելը,

գ) Ազգային օրակարգի իրականացմանը նպաստելը՝ համապատասխան ծրագրերի իրագործման միջոցով (մասնակցության, առաջարկների մշակմանը եւ բարեփոխումների գործընթացների վերահսկմանն ու մշտադիտարկմանը): Այդ նպատակով ՀԱՊ-ը նախաձեռնում է համապատասխան ուսումնասիրություններ և փորձագիտական վերլուծություններ, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ գործողություններ,

դ) Ջատագովման արշավների իրականացումը ի նպաստ ԱլԳ անդամ պետություններում ժողովրդավարության կայացման, ԱլԳ ՔՀՖ-ի առաքելության և նպատակների իրականացման ուարժեքների տարածման,

ե) ԱլԳ ՔՀՖ-ի, ՀԱՊ-ի ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ցանկացած գործունեության իրականացումը:

2. ՀԱՊ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՀԱՊ Կանոնադրությունը ՀԱՊ-ի գործունեությունը կարգավորող հիմնական փաստաթուղթն է:

2.2 ՀԱՊ Կանոնադրության 2.3. կետում նշված Հայաստանի քաղաքացիական հասարակության ցանկացած կառույց կարող է դառնալ ՀԱՊ անդամ՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Ազգային համակարգողին կամ ՀԱՊ Քարտուղարությանը, որում նաև կհավաստի, որ ծանոթացել և ընդունում է ՀԱՊ Կանոնադրությունը: Այն կառույցները, որոնք ՀԱՊ-ին միանալու մասին ցանկություն են հայտնել ավելի վաղ, քան

սույն Կանոնադրության (նախկինում՝ ՀԱՊ կազմակերպական սկզբունքների) ընդունումը, համարվում են ՀԱՊ անդամ, եթե հակառակի վերաբերյալ գրավոր չեն հայտարարել:

2.3 Սույն Կանոնադրության նպատակների համար «քաղաքացիական հասարակության կառույցի» տակ հասկացվում են կամավորական շարժումներ, քաղաքացիական նախաձեռնություններ, առևտրային միություններ (առևտրաարդյունաբերական պալատներ), աշխատանքային միություններ (արհեստակցական եւ գործատուների միություններ), մասնագիտական միավորումներ, ՀԿ-ներ, հանրային քաղաքականության ինստիտուտներ, հիմնադրամներ, շահույթի նպատակ չհետապնդող նման այլ կառույցներ, որոնք ընդունում են ԱլԳ ՔՀՖ-ի առաքելությունը, նպատակները և արժեքները, գերծ են կուսակցական, իշխանական, բիզնես կամ կրոնական ազդեցություններից:

2.4 ՀԱՊ անդամները (բացառությամբ ՔՀՖ Հայաստանի անդամների և ՔՀՖ Հայաստանի պատվիրականների) կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել ՔՀՖ Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի նիստերին, անդամագրվել ՀԱՊ աշխատանքային խմբերին և ենթախմբերին, ինչպես նաև սույն Սկզբունքներով սահմանված կարգով ինքնուրույն ձեւավորել ենթախմբեր:

2.5 ՀԱՊ անդամները պլատֆորմի գործունեությանը մասնակցում են նաև ԱլԳ և ՔՀՖ նպատակների և օրակարգերի հետ կապված առաջարկություններով, գնահատականներով, ուսումնասիրություններով, նախաձեռնություններով:

2.6 ՀԱՊ անդամներն իրավունք ունեն տեղեկացված լինել ՔՀՖ-ի և ՀԱՊ-ի շրջանակներում իրականացվող գործընթացների, միջոցառումների, նախաձեռնությունների և այլ գործունեության մասին և դրանց մասին տեղեկացնել պլատֆորմի այլ անդամներին:

2.7 ՀԱՊ անդամներն իրենց հայտարարությունները եւ կատարված աշխատանքի արդյունքները ՀԱՊ-ի անունից կարող են տարածել՝ ՔՀՖ անդամների ընդհանուր ժողովի համապատասխան որոշման առկայության դեպքում: Հակառակ պարագայում այդ նյութերը տարածվում են հեղինակ կազմակերպությունների անունից:

2.8 ՀԱՊ բոլոր անդամների համար սահմանված է տարեկան 12,000 ՀՀ դրամ անդամավճար, որն ուղղվում է ՀԱՊ ընթացիկ գործունեության ֆինանսավորմանը: ՀԱՊ Կանոնադրության մեջ այս փոփոխությունը ուժի մեջ է մտել 2023թ. հունվարի 1-ից:

2.9 ՀԱՊ անդամության դադարեցումը կարող է տեղի ունենալ ՀԱՊ համաժողովի կողմից՝ անդամի կողմից ՀԱՊ Կանոնադրության, Էթիկայի կանոնների եւ այլ ներքին կարգավորումների էական խախտումների դեպքերում, ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ քարտուղարությանը ներկայացված գրավոր դիմումի հիման վրա, կամ 2.8.1 կետում նշված անդամավճարները 3 տարի անընդմեջ չվճարելու հիմքով:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀԱՊ կառավարման մարմինները

ՀԱՊ-ի կառավարումն ու աշխատանքների կանոնակարգումն իրականացվում են հետևյալ մարմինների կողմից.

ա) ՔՀՖ-ի Հայաստանի անդամների (այսուհետ՝ ՔՀՖ անդամներ) ընդհանուր ժողով (ՀԱՊ համաժողով),

բ) ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակների (այսուհետ՝ ՔՀՖ պատվիրակներ) ժողով,

գ) ՔՀՖ ՀԱՊ-ի համակարգող,

դ) ՔՀՖ ՀԱՊ-ի գործադիր մարմին,

ե) ՔՀՖ ՀԱՊ-ի աշխատանքային խմբերի համակարգողներ,

զ) ՔՀՖ ՀԱՊ-ի քարտուղարություն:

3.2 ՔՀՖ-ի Հայաստանի անդամները

3.2.1 ՔՀՖ-ի Հայաստանի անդամներն այն կազմակերպություններն են, որոնք անդամակցում են ՀԱՊ-ին և երբևէ հանդիսացել են կամ հանդիսանում են ՔՀՖ համաժողովի պատվիրակ:

3.2.2 ՔՀՖ-ի Հայաստանի անդամներն ընդունում են ՔՀՖ-ի առաքելությունը և արժեքները, ՔՀՖ-ի կանոնադրությունը, էթիկայի կանոնները, ինչպես նաև մյուս ներքին քաղաքականությունները, ընթացակարգերը և գրավոր համաձայնությունները, որոնք ընդունել են ՔՀՖ-ի և ՀԱՊ-ի որոշում կայացման իրավունք ունեցող մարմինները:

3.3 ՔՀՖ-ի Հայաստանի անդամների ընդհանուր ժողովը (ՀԱՊ համաժողովը)

3.3.1 ՔՀՖ-ի Հայաստանի անդամների ընդհանուր ժողովը (ՀԱՊ համաժողովը) ձևավորվում է ՔՀՖ-ի բոլոր տարիների համաժողովների Հայաստանի այն պատվիրակներից (պատվիրակ է համարվում ՔՀՖ համաժողովի մասնակցության պաշտոնական հրավեր ստացած կազմակերպության լիազորված անձը, որն իր կարգավիճակը հաստատում է ՔՀՖ տարեկան համաժողովին մասնակցելով), որոնք հաստատել են իրենց անդամակցությունը ՀԱՊ-ին: ՔՀՖ Հայաստանի անդամները ՀԱՊ համաժողովին իրենց անդամակցությունը կարող են հավաստել՝ իրենց ցանկության մասին տեղեկացնելով ՀԱՊ քարտուղարությանը ոչ ուշ քան ՔՀՖ հերթական համաժողովից հետո երկու շաբաթվա ընթացքում՝ ի պատասխան ՀԱՊ քարտուղարության գրավոր հարցմանը:

3.3.2 ՔՀՖ-ի Հայաստանի անդամները գրկվում են ՀԱՊ համաժողովի անդամ վերահաստատվելու իրավունքից, եթե վերջին անգամ ՔՀՖ պատվիրակ ընտրվելուց հետո, անընդմեջ 3 տարիների ընթացքում չեն վերահաստատում ՀԱՊ համաժողովի անդամակցությունը:

3.3.3 ՀԱՊ յուրաքանչյուր անդամ կարող է ՀԱՊ համաժողովի ժամանակավոր անդամի կարգավիճակ ստանալ՝ ներկայացնելով համապատասխան դիմում եւ ստանալով ՀԱՊ համաժողովի մեծամասնության աջակցությունը: Ժամանակավոր անդամի վերաբերյալ որոշում կայացնելիս ՀԱՊ համաժողովը որպես հիմնական չափորոշիչ է ընդունում թեկնածուի ակտիվ եւ արդյունավետ մասնակցությունը ՔՀՖ-ի եւ ՀԱՊ-ի գործունեությանը ՀԱՊ գործադիր մարմնի գործունեության կողմից հաստատված «ՀԱՊ անդամների ակտիվության չափորոշիչներին» համապատասխան, ինչպես նաեւ նրա կողմից ՔՀՖ-ի եւ ՀԱՊ-ի էթիկայի կանոնները պահպանելու հանգամանքը: Ժամանակավոր անդամի լիազորություններն ուժի մեջ են մտնում իր թեկնածության շուրջ քվեարկությունից հետո՝ հաջորդ ընդհանուր ժողովում եւ շարունակվում մինչեւ ՀԱՊ համաժողովը, որից հետո կա՛մ դադարեցվում են, կա՛մ շարունակվում՝ ՀԱՊ համաժողովի նոր կազմի պարզ մեծամասնության որոշմամբ, բացառությամբ 3.3.5 կետում նախատեսված դեպքերի:

3.3.4 ՀԱՊ համաժողովի անդամների, այդ թվում՝ ժամանակավոր անդամների, լիազորություններն ավտոմատ կերպով դադարեցվում են ՔՀՖ երկու համաժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում հրավիրված՝ ՀԱՊ համաժողովի նիստերից երեք բացակայության եւ 3.5.1 ու 3.5.2 կետերում նշված անդամավճարները 3 տարի անընդմեջ չվճարելու դեպքում: ՀԱՊ համաժողովի անդամի լիազորությունների դադարեցումն ուժի մեջ է մտնում մինչեւ ՔՀՖ հերթական համաժողովը, որից հետո կարող է վերականգնվել 3.3.1 եւ 3.3.3 կետերում նախատեսված կարգով, բացառությամբ 3.3.5 կետում նախատեսված դեպքերի:

3.3.5 ՀԱՊ համաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել նաեւ այդ անդամի կողմից սույն Կանոնադրությունով նախատեսված ընթացակարգերի այնպիսի խախտման դեպքում, որը հանգեցնում է ՀԱՊ-ի եւ նրա մարմինների կանոնավոր գործունեության խաթարմանը եւ էական վնաս է հասցնում ՀԱՊ-ի եւ նրա մարմինների հեղինակությանը: Լիազորությունների դադարեցման մասին որոշումը կայացվում է ՀԱՊ-ի էթիկայի խորհրդի եզրակացության հիման վրա ՀԱՊ համաժողովի կողմից: Էթիկայի խորհրդի եզրակացությունն ուղարկվում է ՀԱՊ անդամներին ոչ ուշ քան ընդհանուր ժողովից 72 ժամ առաջ:

3.3.6 ՀԱՊ համաժողովի որոշումը կարող է բողոքարկվել ՔՀՖ-ի Համապատասխանության կոմիտեին:

3.3.7 ՀԱՊ համաժողովի տարեկան առաջին նիստը պետք է գումարվի ՔՀՖ տարեկան համաժողովից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, բայց դրանից հետո երկու շաբաթից ոչ շուտ: Ընթացիկ նիստերը գումարվում են տարեկան առնվազն վեց անգամ (ներառյալ ընդհանուր ժողովի տարեկան առաջին նիստը):

3.3.8 ՀԱՊ համաժողովի նիստ հրավիրելու իրավունք ունեն՝

- ա) ՔՀՖ ՀԱՊ-ի գործադիր մարմինը,
- բ) ՔՀՖ ՀԱՊ-ի համակարգողը,
- գ) ՔՀՖ ՀԱՊ-ի էթիկայի խորհուրդը,

դ) ՔՀՖ ՀԱՊ-ի աշխատանքային խումբը,

ե) ՔՀՖ Հայաստանի անդամների 1/3-ը:

Նիստը նախաձեռնողը պարտավոր է Քարտուղարության միջոցով նիստի նախնական օրակարգը եւ քննարկման նախատեսվող նյութերը ուղարկել ՀԱՊ անդամներին նիստի հրավիրման օրվանից ոչ ուշ, քան 72 ժամ առաջ:

3.3.9 ՀԱՊ համաժողովը`

ա) ՔՀՖ առաջարկությունների հիման վրա մշակում է ԱԳ շրջանակներում ԵՄ-Հայաստան արդյունավետ համագործակցությանը նպաստող առաջարկություններ,

բ) հաստատում է ՀԱՊ գործունեության ռազմավարությունները, հայեցակարգերը, աշխատանքային ծրագրերը,

գ) լսում եւ հաստատում է ՀԱՊ աշխատանքային գործունեության տարեկան ծրագրերի կատարման մասին հաշվետվությունները,

դ) հաստատում է ՀԱՊ քարտուղարության ֆինանսական հաշվետվությունները,

ե) հաստատում է ՀԱՊ Կանոնադրությունը եւ դրա մեջ կատարվող փոփոխությունները,

զ) հաստատում է ՀԱՊ էթիկայի կանոնները եւ դրա մեջ կատարվող փոփոխությունները,

է) հաստատում է ՀԱՊ էթիկայի խորհրդի աշխատակարգը եւ դրա մեջ կատարվող փոփոխությունները,

ը) լսում եւ որոշումներ է կայացնում ՀԱՊ էթիկայի խորհրդի եզրակացությունների վերաբերյալ,

թ) հաստատում է ՀԱՊ գործադիր մարմնի գործունեության աշխատակարգը եւ դրա մեջ կատարվող փոփոխությունները, Արեւելյան

ժ) որոշումներ է կայացնում ՀԱՊ անդամության դադարեցման վերաբերյալ,

ի) Արեւելյան գործընկերության շրջանակներում իրականացվող բարեփոխումների եւ այլ նպատակներով կարող է համագործակցություն հաստատել ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, Եվրամիության կառույցների, ինչպես նաեւ միջազգային, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ քաղաքական ուժերի հետ,

յ) համագործակցում է ԱԳ այլ պետությունների ՔՀՖ ազգային պատժորմների, ինչպես նաեւ ԵՄ երկրների շահագրգիռ կազմակերպությունների հետ,

իւ) ՀԱՊ անունից` ՀԱՊ անդամների առաջարկների հիման վրա մշակում է առաջարկություններ ՔՀՖ հաջորդ համաժողովի օրակարգի ձեւավորման վերաբերյալ,

ծ) կազմակերպում է ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընտրություն` սույն Կանոնադրությունով եւ ՔՀՖ կանոնադրությամբ սահմանված կարգով,

կ) իրականացնում է ՀԱՊ կառավարման այլ մարմինների իրավասությանը չվերապահված եւ լուծում պահանջող այլ իրավասություններ:

հ) ապահովում է ԱԳ գործընթացների վերաբերյալ հանրային տեղեկացվածությունը՝ ներգրավելով լրատվամիջոցներին:

3.3.10 ՀԱՊ համաժողովն իրավագոր է իր անդամների կեսից ավելիի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են համաժողովին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ 3.3.2, 3.3.3, 3.3.5, 6.1 եւ 6 .2 կետերով նախատեսված դեպքերի:

3.3.11 ՀԱՊ համաժողովի որոշումները կարող են կայացվել նաեւ էլեկտրոնային քվեարկության եղանակով, որի դեպքում գործում են սույն Կանոնադրության 3.3.10 կետի դրույթը, բացառությամբ

3.3.12 կետով նախատեսված դեպքերի: 3.3.12 ՀԱՊ անունից հայտարարությունները էլեկտրոնային փոստի միջոցով ՀԱՊ համաժողովի կողմից քվեարկվելու դեպքում գործում են հատուկ կանոններ: Հայտարարության նախագիծը քվեարկության համար կարող է տարածվել միայն ՔՀՖ ՀԱՊ-ի համակարգողի կամ ՀԱՊ-ի գործադիր մարմնի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ, կամ ՀԱՊ-ի անդամ ոչ պակաս քան 5 կազմակերպությունների նախաձեռնությամբ: Վերջիններս էլ սահմանում են քվեարկության ժամկետները, որոնք չեն կարող 72 ժամից պակաս լինել: Հայտարարության տեքստի փոփոխության վերաբերյալ առաջարկությունները նախաձեռնողների կողմից ընդունվելու դեպքում, եթե դրանք խմբագրական կամ տեխնիկական բնույթի չեն, քվեարկության ժամկետը երկարացվում է 24 ժամով:

Հայտարարությունը քվեարկվում է «կողմ», «դեմ», «ձեռնպահ» ձայներով: Հայտարարությունը համարվում է ընդունված այն պահից, երբ դրան կողմ քվեարկածների ձայները անցնում են պատվիրակների 50 տոկոսի շեմը, այլ պարագայում, եթե դրա կողմ քվեարկածների թիվը պակաս է պատվիրակների թվի կեսից, ապա հայտարարությունը ընդունված է համարվում, եթե կողմ քվեարկածների թիվը գերազանցում է դեմ քվեարկածների թվին:

Հայտարարության նախագծերի քվեարկությունը կազմակերպվում է ՀԱՊ Քարտուղարության կողմից: Քարտուղարությունն ապահովում է բոլոր պատվիրակների պատշաճ իրազեկումը:

3.4 ՔՀՖ-ի Հայաստանի անդամների իրավունքները

3.4.1 Բավարար թվով տեղերի առկայության պարագայում ՔՀՖ-ի Հայաստանի բոլոր անդամներն իրավունք ունեն իրենց հաշվին մասնակցելու ՔՀՖ-ի տարեկան համաժողովին եւ այլ միջոցառումներին, այդ թվում՝ աշխատանքային խմբերի հանդիպումներին: Նրանք չունեն ձայնի իրավունք, որով օժտված են միայն ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակները:

3.4.2 ՔՀՖ-ն ներկայացնելու համար ընտրված լինելու պարագայում ՔՀՖ-ի Հայաստանի անդամները կարող են ներկայացնել ՔՀՖ-ն ԱԳ-ի պլատֆորմներում եւ պանելներում նույն

իրավունքներով, ինչ պատվիրակները: ՔՀՖ-ի Հայաստանի անդամներն ունեն ՀԱՊ-ի կառավարման մարմիններ ընտրելու եւ դրանցում ընտրվելու իրավունք, բացառությամբ ՀԱՊ համակարգողի, որին ընտրում են միայն ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակներն իրենց կազմից:

3.4.3 ՔՀՖ-ի Հայաստանի անդամներն ունեն ՀԱՊ-ի համաժողովի որոշումների կայացմանը ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք:

3.4.4 ՔՀՖ ՀԱՊ-ի Հայաստանի անդամները կարող են մասնակցել ՔՀՖ-ի ենթադրամաշնորհային ծրագրերին և ՔՀՖ-ի այլ գործունեությանը:

3.5 ՔՀՖ-ի Հայաստանի անդամների պարտականությունները

3.5.1 Այլ ՔՀՖ Հայաստանի այն անդամները, որոնց տարեկան շրջանառությունը գերազանցում է 50,000 եվրոյին համարժեք դրամ գումարը, բացի 2.8 կետով սահմանված անդամավճարի, որն ուղղվում է ՀԱՊ Քարտուղարության բյուջե, Այլ ՔՀՖ բյուջե են վճարում տարեկան 50 եվրո անդամավճար: ՀԱՊ Կանոնադրության մեջ այս փոփոխությունը ուժի մեջ է մտել 2023թ. հունվարի 1-ից:

ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունները դադարում են վերջինիս կողմից ՀԱՊ-ին կամ Այլ ՔՀՖ-ի քարտուղարությանը ներկայացված գրավոր հրաժարականի դեպքում:

3.5.2 ՔՀՖ-ի Հայաստանի անդամի ՔՀՖ-ում կամ ՀԱՊ-ում լիազորությունների դադարման մասին ՔՀՖ Համապատասխանության կոմիտեի, Ղեկավար կոմիտեի, ՔՀՖ-ի Ընդհանուր ժողովի և ՀԱՊ համաժողովի ընդունած որոշումների դեպքում:

3.5.3 Այլ ՔՀՖ-ի լուծարման դեպքում,

3.5.4 Տվյալ կազմակերպության լուծարման դեպքում:

3.6 ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը

3.6.1 ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունները դադարեցվում են վերջինիս կողմից ՔՀՖ-ի կանոնադրության, Էթիկայի կանոնների կամ ՔՀՖ-ի այլ ներքին կարգավորումների, ՀԱՊ Կանոնադրության, Էթիկայի կանոնների եւ այլ ներքին կարգավորումների էական խախտումների դեպքերում,

3.6.2 ՔՀՖ-ին, ՀԱՊ-ին կամ վերջիններիս հեղինակությանը էական վնաս հասցնելու կամ դրա իրական սպառնալիքի առկայության դեպքերում,

3.6.3 3.5.1 կետում նշված անդամավճարը երեք տարի անընդմեջ չվճարող կազմակերպությունները զրկվում են Այլ ՔՀՖ անդամությունից: ՀԱՊ Կանոնադրության մեջ այս փոփոխությունը ուժի մեջ է մտել 2023թ. հունվարի 1-ից:

3.6.4 ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունների դադարեցման իրավասությամբ օժտված է Այլ ՔՀՖ-ի Համապատասխանության կոմիտեն, Ղեկավար կոմիտեն, Այլ ՔՀՖ-ի համաժողովը, ՀԱՊ-ի համաժողովը: ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունների դադարեցման մասին առաջարկով այդ մարմիններին կարող է դիմել ՔՀՖ-ի որեւէ անդամ,

ՔՀՖ-ի աշխատանքային խումբը, ԱԳ ՔՀՖ-ի քարտուղարությունը, ՀԱՊ գործադիր մարմինը եւ ՀԱՊ էթիկայի խորհուրդը: ՔՀՖ Ղեկավար կոմիտեն կարող է իր նախաձեռնությամբ սկսել ՔՀՖ-ի Հայաստանի անդամի լիազորությունների դադարեցման գործընթացը: Այս մարմինների որոշումների միջեւ հակասության պարագայում վերջնական որոշումը կայացնում է ԱԳ ՔՀՖ-ի համաժողովը:

3.6.5 ՔՀՖ-ի Հայաստանի այն անդամը, որի լիազորությունների դադարեցման վերաբերյալ առկա է առաջարկություն, պետք է ծանուցվի այդ մասին այդ առաջարկի քննարկումից առնվազն 10 օր առաջ: ՔՀՖ-ի Հայաստանի անդամն ունի արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք, այդ թվում՝ ներկայացնելով ապացույցներ եւ բացատրություններ, ինչպես նաեւ պահանջելով բացատրություններ լիազորությունների դադարեցման առաջարկի կապակցությամբ: Լիազորությունների դադարեցման որոշումը կայացրած մարմինը այդ մասին գրավոր ծանուցում է ՔՀՖ-ի Հայաստանի անդամին, ՀԱՊ-ի համակարգողին, ՀԱՊ-ի էթիկայի խորհրդին եւ ԱԳ ՔՀՖ-ի քարտուղարությանը:

3.7 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակների եւ ՀԱՊ-ի կառավարման մարմինների լիազորությունների ժամկետը

3.7.1 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակների եւ ՀԱՊ-ի կառավարման մարմինների լիազորությունների ժամկետը երկու տարի է՝ սկսած պատվիրակների ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից, ինչը համապատասխանում է Ֆորումի գործունեության երկամյա պարբերաշրջանին:

3.7.2 ՔՀՖ պատվիրակների ընտրությունների մեկնարկը տրվում է ընթացիկ պարբերաշրջանի երկրորդ տարվա ավարտին եւ ավարտվում դրան հաջորդող տարվա մարտի վերջին օրը:

3.8 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակները եւ պատվիրակների ժողովը

3.8.1 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակները Հայաստանի քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների ներկայացուցիչներն են, որոնք ընտրվել են ՔՀՖ-ի կանոնադրությամբ եւ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ համաձայն ՔՀՖ-ի կողմից սահմանված աշխարհագրական, թեմատիկ եւ գենդերային քվոտաների:

3.8.2 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակները, որոնց թիվը չի գերազանցում 20-ը, ընտրվում են Հայաստանի ազգային պլատֆորմի կողմից՝ ՔՀՖ-ի աշխատանքային խմբերի համակարգողների, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության եւ Հայաստանի ազգային պլատֆորմի երաշխավորությունների հիման վրա հետեւյալ կարգով.

3.8.3 ՔՀՖ-ի քարտուղարության կողմից տվյալ պարբերաշրջանում պատվիրակ ընտրվելու համար գրանցված կազմակերպությունների ցանկն ստանալուց հետո ՔՀՖ-ի քարտուղարությունն այն տրամադրում է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը, որը կարող է երաշխավորել պատվիրակ դառնալու հետաքրքրություն ցուցաբերած կազմակերպությունների 10%-ին: Միեւնույն ժամանակ, ՔՀՖ-ի քարտուղարությունը ցուցակը տրամադրում է ՔՀՖ-ի աշխատանքային խմբերի

համակարգողներին, որոնք ընտրում են գրանցված կազմակերպությունների 20%-ին՝ հնարավորության սահմաններում պահպանելով աշխատանքային խմբերի համար սահմանված քվոտաները (առաջին աշխատանքային խումբ՝ 7 անդամ, երկրորդ, երրորդ և չորրորդ աշխատանքային խմբեր՝ 4-ական անդամներ և հինգերորդ աշխատանքային խումբ՝ 1 անդամ): Եթե Եվրոպական միության պատվիրակության և Ֆորումի աշխատանքային խմբերի երաշխավորած կազմակերպությունները համընկնում են, ապա այդ կազմակերպությունները կարող են ավտոմատ դառնալ պատվիրակ: Այս կազմակերպությունների թիվը չի կարող գերազանցել 10-ը: Մնացած կազմակերպությունները երաշխավորվում են ՀԱՊ համաժողովում անցկացվող ընտրությունների արդյունքում: Քվեարկությունից առաջ թեկնածուներին հնարավորություն է ընձեռվում ներկայացնել իրենց հայտը և պատասխանել հարցերին: Պատվիրակների վերջնական ցուցակը կազմում է ՀԱՊ-ի գործադիր մարմինը՝ հնարավորության դեպքում ապահովելով աշխարհագրական, թեմատիկ և գենդերային հավասարակշռություն, ինչպես նաև երբեմն պատվիրակ չհանդիսացած ՀԱՊ-ի 3 անդամի և երբեմն ՀԱՊ-ի անդամ չհանդիսացած 3 կազմակերպության ներգրավումը ցուցակում: Պատվիրակների վերջնական ցուցակը կազմելիս հաշվի են առնվում նաև ԵՄ-ի, ԲՀՖ-ի աշխատանքային խմբերի համակարգողների երաշխավորությունները: Պատվիրակների վերջնական ցուցակը հաստատում է Եվրոպական հանձնաժողովը: Պատվիրակների վերջնական ցուցակի հաստատումից հետո այն հրապարակվում է և ԲՀՖ-ի երկամյա պարբերաշրջանի պատվիրակներն սկսում են իրենց գործունեությունը գույք օրացուցային տարվա սկզբին, մարտի վերջից ոչ ուշ:

3.8.4 ԲՀՖ-ի Հայաստանի պատվիրակների ժողովը ձևավորվում է ԲՀՖ Հայաստանի այն պատվիրակներից (ԲՀՖ համաժողովի մասնակցության պաշտոնական հրավեր ստացած և համաժողովին մասնակցած կազմակերպություններ), որոնք ավտոմատ հանդիսանում են նաև ԲՀՖ-ի անդամներ: Միեւնույն ժամանակ, ԲՀՖ Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի անդամ լինելու կամ չլինելու հանգամանքը չի ազդում 3.9.1-ին համապատասխան ՀԱՊ հերթական համաժողովի ընթացքում ՀԱՊ համակարգողի ընտրությանը մասնակցության իրավունքի վրա:

3.8.5 ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովը ձայների պարզ մեծամասնությամբ իր կազմից ընտրում է ՀԱՊ ազգային համակարգողին (ԲՀՖ Ղեկավար կոմիտեի անդամին) և ընդունում նրա հրաժարականը:

3.8.6 ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովի նիստերը գումարվում են ՀԱՊ համակարգողի կողմից կամ ժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ:

3.8.7 ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովի և ԲՀՖ Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի նիստերի, անցկացման վայրի, օրվա, ժամի և օրակարգի մասին մասնակիցները տեղեկացվում են գումարման ժամից առնվազն 96 ժամ առաջ՝ էլեկտրոնային նամակագրության կամ հեռախոսազանգի միջոցով:

3.8.8 ԲՀՖ Հայաստանի այն պատվիրակները, որոնք հաստատել են ՀԱՊ պատվիրակների ընդհանուր ժողովին անդամակցությունը, իրենց լիազորությունները պահպանում են մինչև ԲՀՖ հաջորդ համաժողովը:

3.8.9 Պատվիրակները հանդիսանում են ՔՀՖ Հայաստանի անդամներ: Միայն պատվիրակները կարող են ընտրվել ՔՀՖ-ի որոշումների կայացման մարմիններում եւ քվեարկել Ֆորումի կանոնադրությամբ նախատեսված հանդիպումների ընթացքում:

3.8.10 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակներն իրավունք ունեն.

3.8.10.1 մասնակցելու Ֆորումի աշխատանքներին, այդ թվում՝ Ֆորումի կանոնադրությամբ նախատեսված ժողովներին, որոնք են յուրաքանչյուր երկամյա պարբերաշրջանում աշխատանքային խմբի երկու հանդիպում եւ երկու տարեկան ժողով, ենթադրամաշնորհներին, ԱԳ-ի պլատֆորմների եւ պանելների հանդիպումներին, ինչպես նաեւ ՔՀՖ-ի այլ միջոցառումներին,

3.8.10.2 ընտրվելու Ֆորումի որոշում կայացնող մարմիններում,

3.8.10.3 ընտրելու անձամբ կամ էլեկտրոնային եղանակով՝ ՔՀՖ-ի կանոնադրությամբ եւ սույն Կանոնադրությամբ սահմանված քվեարկության ընթացակարգերով:

3.9 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակի լիազորությունների դադարումը

3.9.1 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակի լիազորությունները կարող են կամավոր հիմունքներով կասեցվել կամ դադարել, եթե վերջինս գրավոր դիմում է ներկայացրել այդ մասին ՔՀՖ-ի կամ ՔՀՖ ՀԱՊ-ի քարտուղարությանը՝ նշելով, թե արդյոք դիմում է լիազորությունների դադարեցման, թե կասեցման համար եւ եթե կասեցման, ապա ինչ ժամկետով:

3.9.2 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակի լիազորությունները ենթակա են դադարման, եթե ժամանակավորապես կասեցվել կամ դադարեցվել է ԱԳ ՔՀՖ-ի կամ ՀԱՊ-ի գործունեությունը՝ համաձայն Համապատասխանության կոմիտեի, Ղեկավար կոմիտեի, ընդհանուր ժողովի կամ ՀԱՊ-ի որոշման՝ սույն Կանոնադրությունով կամ ՔՀՖ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.10 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակի լիազորությունների դադարեցումը

3.10.1 ՔՀՖ-ի Հայաստանի պատվիրակի լիազորությունների դադարեցումը կարող է տեղի ունենալ

ա/ ՔՀՖ-ի կանոնադրության, ՀԱՊ-ի կանոնադրության, Էթիկայի կանոնների կամ ՔՀՖ-ի այլ ներքին կարգավորումների էական խախտման կամ

բ/ ՔՀՖ-ին կամ ՀԱՊ-ին, կամ վերջիններիս հեղինակությանը էական վնաս հասցնելու կամ դրա իրական սպառնալիքի առկայության պարագայում կամ

գ/ 2.8.2 եւ/կամ 2.8.3 կետերում նշված անդամավճարները երեք տարի չվճարելու դեպքում:

3.11 ԲՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի համակարգողը

3.11.1 ԲՀՖ Հայաստանի ազգային համակարգողը.

- ա) ներկայացնում է Հայաստանի ազգային պլատֆորմը Բաղաքացիական հասարակության ֆորումում,
- բ) համակարգում է ՀԱՊ գործունեությունը,
- գ) նախագահում է ԲՀՖ Հայաստանի անդամների եւ պատվիրակների ժողովներում,
- դ) իրականացնում է ԲՀՖ Կանոնադրությանը եւ ՀԱՊ Կանոնադրությանը համապատասխան այլ գործառնություններ:
- ե) հաշվետու է ԲՀՖ ի Հայաստանի պատվիրակների ժողովին,
- զ) Հայաստանի ազգային պլատֆորմում տեղի ունեցած զարգացումների մասին տեղեկությունները, այդ թվում՝ հայտարարություններն ու միջոցառումների մասին տեղեկատվությունը փոխանցում է ԲՀՖ Ղեկավար կոմիտեին, իսկ վերջինիս զարգացումները՝ Հայաստանի ազգային պլատֆորմին,
- է) Բացահայտում է ջատագովության կարիք ունեցող հայաստանյան առաջնահերթությունները եւ հնարավորությունները,
- ը) Վերահսկողություն է իրականացնում ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ընտրության գործընթացի նկատմամբ,
- թ) Կանոնավոր հաղորդակցություն է ապահովում Հայաստանի ազգային պլատֆորմի անդամների հետ,
- ժ) Տարին առնվազն մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ՀԱՊ համաժողովին,
- ժա) Ֆորումի տարեկան ժողովին ընդառաջ ներկայացնում է Հայաստանի ազգային պլատֆորմի գործունեության մասին հաշվետվությունը,
- ժբ) մասնակցում է Ֆորումի ղեկավար կոմիտեի առնվազն երեք երկօրյա հանդիպումներին:

3.11.2 ԲՀՖ Հայաստանի ազգային համակարգողն ընտրվում է ԲՀՖ Հայաստանի պատվիրակների կազմից, ՀԱՊ համաժողովի ժամանակ ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, փակ զաղտնի քվեարկությամբ: ԲՀՖ-ի Ղեկավար կոմիտեի գրավոր համաձայնության պարագայում ԲՀՖ ՀԱՊ համակարգողը կարող է ընտրվել ՀԱՊ անդամների կողմից: ԲՀՖ ՀԱՊ համակարգողի ընտրությունը կազմակերպվում է Հայաստանի պատվիրակների ընտրությունից հետո: ԲՀՖ ՀԱՊ համակարգողը չի կարող ընտրվել ավելի քան 2 (երկու) անգամ: ԲՀՖ ՀԱՊ համակարգողն ի պաշտոնե ԲՀՖ-ի Ղեկավար կոմիտեի անդամ է եւ նրա լիազորություններն ուժի մեջ են մտնում իր ընտրության պահից: ՀԱՊ համակարգողի լիազորությունների ժամկետը երկու տարի է:

3.11.3 ԲՀՖ ՀԱՊ Հայաստանի ազգային համակարգողի լիազորությունները դադարում են սեփական դիմումի հիման վրա, ԲՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովի անդամների

պարզ մեծամասնության որոշմամբ եւ համակարգողի պարտականությունների կատարման անհնարինության դեպքերում (առողջական վիճակից, գործունեության բնույթի կամ բնակության երկրի փոփոխությունից ելնելով):

3.11.4 ՔՀՖ ՀԱՊ համակարգողի լիազորությունները դադարելու դեպքում՝ ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ժողովի անդամներից ընտրվում է ՔՀՖ նոր ազգային համակարգող:

3.11.5 ՀԱՊ համաժողովին անդամակցությունը սույն Կանոնադրությանը համապատասխան չհաստատելու դեպքում ՀԱՊ համակարգողը ՀԱՊ շրջանակներում իր գործառույթներն իրականացնում է առանց ձայնի իրավունքի:

3.12 ՀԱՊ գործադիր մարմինը

3.12.1 ՀԱՊ գործադիր մարմինը բաղկացած է ՔՀՖ Հայաստանի ազգային պատֆորմի համակարգողից, ՀԱՊ աշխատանքային խմբերի համակարգողներից եւ ԱԳ ՔՀՖ աշխատանքային որեւէ խմբի ընթացիկ համակարգող ընտրված ՀԱՊ անդամից/ներից (եթե այդպիսին/ք կա/ն):

3.12.2 ՀԱՊ գործադիր մարմինը՝

ա) համակարգում է ՀԱՊ համաժողովի որոշումների կենսագործումը,

բ) կազմավորում է աշխատանքային ենթախմբեր եւ հաստատում է դրանց գործունեության աշխատակարգերը,

գ) ընդունում է ՀԱՊ համաժողովի եւ ընթացիկ ժողովների բացառիկ իրավասություններից դուրս՝ ՀԱՊ գործունեության կազմակերպման այլ հարցերի մասին որոշումներ:

3.13 ՀԱՊ աշխատանքային խմբեր եւ ենթախմբեր

3.13.1 Իր առջեւ դրված նպատակներին հասնելու համար ՀԱՊ-ը՝ ԱԳ թեմատիկ պլատֆորմներին եւ ՔՀՖ աշխատանքային խմբերին համապատասխան, ձեւավորում է իր աշխատանքային խմբերը եւ ենթախմբերը.

3.13.2 ՀԱՊ աշխատանքային խմբերը՝

1) կազմակերպում եւ համակարգում են ԱԳ շրջանակներում ՀՀ ազգային օրակարգի՝ իրենց ոլորտներին վերաբերվող հարցերի շրջանակի ձեւավորումը՝ հանրային քննարկումների եւ համացանց առաջարկների հավաքագրման հայտարարությունների տարածման, աշխատանքային խմբի գործողությունների պլանի մշակման, իրականացման եւ հաշվետվության հրապարակման միջոցով,

2) նպաստում են ԱԳ շրջանակներում ՀՀ ազգային օրակարգի ձեւավորմանը, իրականացմանը, մոնիթորինգին, գնահատմանը եւ հաշվետվողականությանը,

3) մշակում եւ ներկայացնում են իրենց ոլորտների հետ կապված առաջարկություններ,

4) համագործակցում են ԹՀՖ եւ ազգային այլ պլատֆորմների համապատասխան խմբերի հետ,

5) իրականացնում են իրենց ոլորտներում բարեփոխումներին նպաստող այլ գործունեություն:

3.13.3 Աշխատանքային խմբերի գործունեությունը բաց է: Դրանց կարող է միանալ, ինչպես նաև դրանց քննարկումներին մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության ցանկացած կառույց:

3.13.4 ՀԱՊ անդամ միեւնույն կառույցը կարող է ներկայացված լինել տարբեր աշխատանքային խմբերում, սակայն կարող է քվեարկել (ձայնի իրավունք ունենալ) միայն մեկ աշխատանքային խմբում:

3.13.5 ՀԱՊ անդամ քաղաքացիական հասարակության կառույցները կարող են ՀԱՊ գործադիր մարմնի որոշմամբ ձեւավորել ՀԱՊ ենթախմբեր եւ ինքնուրույն որոշել նրանց գործունեության ուղղությունները եւ առաջնայնությունները: ՀԱՊ ենթախմբերի համակարգողները կարող են մասնակցել ՀԱՊ գործադիր մարմնի աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

3.14 ՀԱՊ աշխատանքային խմբերի համակարգողները

3.14.1 ՀԱՊ աշխատանքային խմբերի համակարգողներն ընտրվում են երկու տարի ժամկետով ԹՀՖ Հայաստանի պատվիրակների ընտրությունից անմիջապես հետո, ՀԱՊ տվյալ աշխատանքային խմբում ներառված ԹՀԿ-ների կազմից՝ տվյալ ԱԽ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: ԹՀՖ Հայաստանի անդամ յուրաքանչյուր կազմակերպություն կարող է քվեարկել (ձայնի իրավունք ունենալ) միայն մեկ աշխատանքային խմբում, ՀԱՊ աշխատանքային խմբերի համակարգողներն իրականացնում են ՀԱՊ աշխատանքային խմբերի ընթացիկ համակարգումը, ապահովում են մշտական կապը ՀԱՊ եւ ԹՀՖ համապատասխան աշխատանքային խմբերի միջեւ:

3.14.2 ՀԱՊ աշխատանքային խմբի համակարգողի լիազորությունները դադարում են սեփական դիմումի հիման վրա, տվյալ աշխատանքային խմբում ձայնի իրավունքով ներգրավված աշխատանքային խմբի տվյալ նիստին ներկա ՀԱՊ անդամների ձայների պարզ մեծամասնության որոշմամբ կամ համակարգողի պարտականությունների կատարման անհնարինության դեպքերում:

3.14.3 ՀԱՊ աշխատանքային խմբի համակարգողի լիազորությունները դադարելու դեպքում ընտրվում է նոր համակարգող՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

3.14.4 ՀԱՊ աշխատանքային խմբի համակարգողը հաշվետու է տվյալ աշխատանքային խմբի անդամներին, ՀԱՊ գործադիր մարմնին եւ ՀԱՊ համաժողովին:

3.14.5 ՀԱՊ աշխատանքային խմբի համակարգողը չի կարող ընտրվել ավելի քան 2 (երկու) անգամ:

3.15 ՀԱՊ Էթիկայի խորհուրդը

3.15.1 ՀԱՊ Էթիկայի խորհուրդը ձեւավորվում է ՀԱՊ համաժողովի կողմից՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3.15.2 ՀԱՊ Էթիկայի խորհրդը բաղկացած է ՀԱՊ երեք անդամից, որոնցից երկուսը կարող են լինել ՀԱՊ նախկին համակարգողներ, եւ առնվազն մեկը պետք է լինի ՀԱՊ այլ անդամ: Վերջինը չի կարող լինել Էթիկայի խորհրդի անդամ մեկ անգամից ավելի:

3.15.3 ՀԱՊ Էթիկայի խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ իր կազմից ընտրում է Էթիկայի խորհրդի նախագահ, որը նաեւ ՀԱՊ-ի Էթիկայի հարցերի խորհրդատուն է:

3.15.4 ՀԱՊ Էթիկայի խորհրդի նախագահի պաշտոնավարման ժամկետը 2 (երկու) տարի է:

3.15.5 ՀԱՊ Էթիկայի խորհրդի նախագահը չի կարող ընտրվել ավելի քան 2 (երկու) անգամ:

3.15.6 ՀԱՊ Էթիկայի խորհուրդը գործում է ՀԱՊ համաժողովի կողմից հաստատված կանոնակարգով եւ Էթիկայի կանոններով:

3.15.7 ՀԱՊ Էթիկայի խորհուրդն ուսումնասիրում եւ դիտարկում է ՀԱՊ-ում Էթիկայի կանոնների խախտման դեպքերը, ՀԱՊ-ի գործունեության շուրջ ծագած բոլոր վեճերը եւ բողոքները:

3.15.8 Հարցին ծանոթանալուց հետո ՀԱՊ Էթիկայի խորհուրդը կազմում է համապատասխան որոշման նախագիծ եւ/ կամ հստակ դիրքորոշմամբ եզրակացություն, այն ներկայացնում է ՔՀՖ Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի քննարկմանը: Վերջինս տվյալ հարցի շուրջ որոշում է կայացնում քվեարկության միջոցով:

3.16 ՀԱՊ քարտուղարությունը

3.16.1 ՀԱՊ քարտուղարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված հասարակական կազմակերպություն է, որը հանդիսանում է իրավաբանական անձ, եւ որի անդամ կարող են լինել ՀԱՊ համաժողովի անդամ կազմակերպությունները: ՀԱՊ քարտուղարության անդամ կարող են դառնալ նաեւ ՀԱՊ անդամ, սակայն երբեւէ ՔՀՖ Հայաստանի պատվիրակ չհանդիսացող ՔՀԿ-ները, եթե նրանց օգտին քվեարկում է ՀԱՊ քարտուղարության անդամների կեսից ավելին:

3.16.2 ՀԱՊ քարտուղարությունն իր կանոնադրությանը համապատասխան կազմակերպական եւ տեխնիկական աջակցություն է ցուցաբերում ՀԱՊ-ին՝ ԱլԳ ծրագրերի կատարման, ԵՄ չափորոշիչներին՝ երկրի ներքին խնդիրների լուծումների համապատասխանության շրջանակներում: Այն նպաստելու է հասարակության բոլոր շերտերի մասնակցության, համախմբման եւ տեղեկացվածության ապահովմանը՝ երկրում ժողովրդավարական բարեփոխումների հետեւողական իրականացմանն ուղղված ԱլԳ ծրագրերի իրագործմանը:

3.16.3 ՀԱՊ քարտուղարությունն իր կանոնադրության համաձայն ներկայացնում իր տարեկան գործունեության եւ ֆինանսական հաշվետվությունները ՀԱՊի գործադիր մարմնին եւ ՀԱՊ համաժողովին:

3.16.4 ՀԱՊ քարտուղարությունը պարտավոր է վարել ՀԱՊ բոլոր անդամների, այդ թվում՝ ՔՀՖ-ի Հայաստանի անդամների եւ պատվիրակների ռեզիստորը, որը թարմացվում է տարին մեկ անգամ եւ հրապարակվում ՀԱՊ-ի կայքում:

3.16.5 ՀԱՊ քարտուղարությունը պատասխանատու է նաեւ ՀԱՊ համաժողովների, ՔՀՖ պատվիրակների ժողովների եւ ՀԱՊ գործադիր մարմնի նիստերի արձանագրությունների պատշաճ կազմման եւ հրապարակման համար:

4 ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

4.1 Միեւնույն անձը չի կարող տարբեր պաշտոններ զբաղեցնել ՀԱՊ-ի կառավարման տարբեր մարմիններում:

4.2 Միեւնույն անձը չի կարող մասնակցել ՔՀՖ-ին կամ ՀԱՊ-ին վերաբերող որեւէ հարցի քննարկմանը կամ որոշումների կայացմանը՝ այդ հարցում գույքային կամ ոչ գույքային շահ(եր) ունենալու պայմաններում:

4.3 ՀԱՊ-ի կառավարման մարմինների անդամները հրապարակում են իրենց գույքային եւ ոչ գույքային շահերը, որոնք կարող են հանգեցնել կամ ընկալվել որպէս շահերի բախում:

4.4 Շահերի բախման արգելքի շրջանցումը հիմք է տվյալ անձի լիազորությունների դադարեցման համար:

5 ՀԱՊ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԳ ՔՀՖ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

5.1 ՀԱՊ Կանոնադրությունը չի կարող հակասել ՔՀՖ-ի կանոնադրությանը:

5.2 Եթէ սույն Կանոնադրությունը չի կարգավորում որեւէ հարց, որը կարգավորված է ՔՀՖ-ի կանոնադրությամբ, ապա գործում է վերջինիս կարգավորումը:

5.3 Եթէ ՀԱՊ Կանոնադրության եւ ՔՀՖ-ի կանոնադրության, արժեքների, առաքելության եւ նպատակների միջեւ առկա է հակասություն, ապա գերակայում են ՔՀՖ-ի կանոնադրությունը, արժեքները, առաքելությունը եւ նպատակները:

6 ՀԱՊ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՀԱՊ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

6.1 ՀԱՊ կանոնադրությունի մեջ լրացումները եւ փոփոխությունները կատարվում են ՔՀՖ-ի Հայաստանի անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀԱՊ համակարգողի, ՀԱՊ

աշխատանքային խմբի, ՀԱՊ գործադիր մարմնի նախաձեռնությամբ: Կանոնադրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին որոշումն ընդունվում է ՔՀՖ համաժողովի անդամների կեսից ավելիի ձայներով:

6.2 ՀԱՊ-ը կարող է լուծարվել ՀԱՊ համաժողովի ձայների 2/3-ի համաձայնությամբ:

Սույն կանոնադրության հիմք հանդիսացող ՀԱՊ կազմակերպական սկզբունքներն ընդունվել են ԱԳ ՔՀՖ չորս համաժողովների (2009, 2010, 2011, 2016) Հայաստանի պատվիրակների՝ 2011թ. սեպտեմբերի 13-ին Երեւանում կայացած ժողովում, ՔՀՖ Ղեկավար կոմիտեի կողմից հաստատվել են 2011թ. նոյեմբերի 28-ին, Պոզնանում, փոփոխվել են 2012թ. մարտի 28-ին Երեւանում կայացած ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովում, 2013թ. մայիսի 27-ին Երեւանում կայացած ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովում, 2017թ. դեկտեմբերի 29-ին Երեւանում կայացած ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովում, 2019թ. հունիսի 7-ին Երեւանում կայացած ՔՀՖ Հայաստանի պատվիրակների ընդհանուր ժողովում: 2020թ. հունվարի 29-ին Երեւանում կայացած ՔՀՖ Հայաստանի անդամների ընդհանուր ժողովում «ՀԱՊ Կազմակերպական սկզբունքները» վերանվանվել են «ՀԱՊ կանոնադրություն», եւ դա հաստատվել է սույն փոփոխություններով: 2022թ. դեկտեմբերի 28-ին եւ 2023թ. հունիսի 23-ին տեղի ունեցած ՀԱՊ համաժողովներում Կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ: